# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի փետրվարի 11-14-ը Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը
   Գեորգի Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

   ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. Գործուղման վայրը / ժամկետները

   Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետություն, ք. Ադիս Աբեբա, 2019 թվականի փետրվարի 11-14

4. Հրավիրող կողմը

   Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Աֆրիկյան միասնության կազմակերպություն (FAO/WHO/AU)

5. Գործուղման նպատակը

   Մասնակցություն 2019 թվականի փետրվարի 12-13-ին Ադիս Աբեբայի Աֆրիկյան միասնության կազմակերպության համաժողովների կենտրոնում կայանալիք «Սննդամթերքի անվտանգության առաջին FAO/WHO/AU միջազգային համաժողովին», համաժողովի շրջանակներում մասնագիտական փորձի փոխանակման, սննդամթերքի անվտանգության ստանդարտների բարձրացման գործում՝ հանրային առողջության, առևտրի և սննդամթերքի անվտանգության ապահովման վերաբերյալ քննարկումների անցկացում:

6. Քննարկված թեմաները

   - ✓ «Կայուն և անվտանգ սննդի համակարգեր կլիմայի արագ փոփոխության դարաշրջանում»

- ✓ «Սպառողներին առողջ ընտրության հնարավորություն ընձեռելու և կայուն սննդի համակարգերով աջակցելու վերաբերյալ»
- ✓ «Սննդային ծագման հիվանդությունների խնդիրը և սննդամթերքի անվտանգության ոլորտում ներդրումների կարևորությունը»
- ✓ «Գիտության, նորարարության և թվային փոխակերպման նշանակությունը սննդամթերքի անվտանգության ոլորտում»:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում քննարկվել են մի շարք ոլորտային առաջնահերթություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ի՝ սնուցման վերաբերյալ գործողությունների տասնամյակին աջակցելու, ինչպես նաև կայուն զարգացման նպատակներին (SDG) հասնելու ջանքերը ամրապնդելու նպատակով՝ ոլորտների և սահմանների միջև սննդամթերքի անվտանգության ռազմավարությունների ու մոտեցումների համախմբման հնարավորությունը:

Ելույթների առանցքում եղել է «Սնունդը ոչ միայն մշակույթ է, այլև մարդու հիմնական իրավունքը» սկզբունքը, ինչպես նաև ընդգծվել է հատկապես սպառողի կողմից հայտնաբերվող խախտումների իրազեկման կարևորությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի հիմնական նպատակին համապատասխան՝ սահմանվել են հիմնական գործողությունները և ռազմավարությունները՝ գլոբալ սննդամթերքի անվտանգության ներկա և ապագա մարտահրավերներին դիմակայելու նպատակով:
Հիմնական դրույթները վերաբերում են կլիմայի փոփոխության պայմաններում սննդամթերքի անվտանգության խնդիրներին, թվայնացման դերին՝ սննդամթերքի անվտանգության և կենդանիների վերահսկման գործընթացում, ինչպես նաև սպառողների իրազեկման աշխատանքների ավելացմանը՝ վատորակ սննդային սովորույթների պայքարի գործընթացում:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության սնուցման և ոչ վարակիչ հիվանդությունների դեպարտամենտի ղեկավար, պրոֆեսոր Բրանկայի հետ քննարկվել է սնուցման խնդիրների և սնուցման նկատմամբ վերահսկողության կարևորությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Որպես առաջարկություն և ակնկալվող արդյունք՝ նախանշվել է քաղաքականության բարձր մակարդակով նվիրվածության բարձրացումը՝ Կայուն զարգացման 2030թ. օրակարգում սննդամթերքի անվտանգության խնդիրը առավել մասշտաբային դարձնելու համար:
Առաջարկվել է կլիմայի փոփոխությունների պայմաններում սննդամթերքի անվտանգության հիմնախնդիրները դարձնել օրակարգ և ներառել շահառու բոլոր գերատեսչությունների՝ կրթության և գիտության նախարարության, առողջապահության նախարարության, բնապահպանության, ինչպես նաև ֆինանսների նախարարության օրակարգում:
Առաջարկվել է սննդամթերքի անվտանգության իրազեկման ծրագրերից բացի մշակել նաև առարկաներ, որոնք կնպաստեն վաղ տարիքից իրազեկման բարձրացմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

19 փետրվար 2019 թ.